



Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
խորհրդի նիստի մասին

ք. Երևան, Զաքյան 7-2

09.01.2023թ.

Խորհրդի հարգելի անդամներ,

Հաշվի առնելով ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.12 կետի պահանջը՝ սույնով Դուք ծանուցվում եք ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 2023 թվականի **2-րդ նիստի մասին**, որը տեղի կունենա **2023 թվականի հունվարի 13-ին, ժամը 18:15-ին**՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

Խորհրդի նիստին խորհրդի անդամները կարող են մասնակցել նաև հեռավար կարգով:

Օրակարգային հարցերով որոշումների նախագծերը, ինչպես նաև դրանց հիմքում ընկած նյութերը տեղադրվում են «Dropbox» էլեկտրոնային պահոցում:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

№	Քննարկվող հարցը	Զեկուցող
1.	Հավակնորդ Մերի Հովհաննիսյանին փաստաբանական գործունեության արտոնագիր տալու հարցը քննարկելու մասին	Սիմոն Բաբայան
2.	Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի փաստաբան Զիվան Ղահրամանին մեկ տարի ժամկետով ՀՀ տարածքում փաստաբանական գործունեություն իրականացնելու հավատարմագիր տրամադրելու հարցը քննարկելու մասին	Սիմոն Բաբայան
3.	Որակավորման հանձնաժողովի ձևավորման, գործունեության և որակավորման քննության կազմակերպման, անցկացման, ընդունման և հանձնման կարգը հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
4.	Փաստաբանների վերապատրաստման, դրա համար անհրաժեշտ վճարների չափը սահմանելու և վճարելու կարգը հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
5.	Փաստաբանի անդամավճարի, հավակնորդի, փաստաբանի օգնականի մուտքի և այլ վճարների չափերը, ինչպես նաև դրանք վճարելու կարգը հաստատելու մասին	Սիմոն Բաբայան

6.	Փաստաբանի արտոնագիր և վկայական տրամադրելու կարգը հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
7.	Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի քվեարկության արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
8.	Հանրային պաշտպանի գրասենյակի կանոնակարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
9.	Անվճար իրավաբանական օգնության տրամադրումը կազմակերպելու մասին կարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
10.	Կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրման մասին կարգը հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
11.	Հանրային պաշտպանների գործունեության ստուգման և գնահատման կարգը հաստատելու մասին	Սիմոն Բաբայան
12.	ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի նիստերի քարտուղարի նշանակման հարցը քննարկելու մասին	Սիմոն Բաբայան

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
նախագահ՝ Սիմոն Բաբայան